

նազան ցեղերը այժմ, թողած ընդհանուր թշնամուն, կուտաղի կրիւ են մղում իրար դէմ նացիօնալիստական հոգի վրայ: Նացիօնալիստական ձգտումները սկսել են արթնանալ նաև Հայաստանում ապրող թուրք ու քուրդ տարրերի մէջ, և այդպիսով աւելի ևս կնճռոտ է դառնում առանց այն էլ գորդեան հանգոյցից աւելի դժուար լուծելի հայկական հարցը: Դաւագրական յեղափոխութեան խիզախ տակտիկան, ինչպէս ցոյց տուեց 25 տարուայ անցեալը, աւելի ևս վատթարացնում է այդ դժոխքում ապրող հայերի կացութիւնը՝ ամբողջ գաւառներ դադարկւում են: հայութիւնից, հայ տարրը իրեւ ցեղական-տնտեսական ոյժ կորցնում է իր նշանակութիւնը, հայերի բնաջնջումը դառնում է թիւրք րէժիմի ներքին ծրագիր: Պոլսում սուլթանին սպանելու անաջող փորձից յետոյ այժմ նորից սկսել են կատաղի ճնշումներ հայերի գլխին. «Ամբողջ երկրում, ասում է (Բց. Են. № 79) ինչպէս գաւառներում, նոյնպէս և Պոլսում նորոգուեցան հալածանքները, ճնշումները, որոնք յիշեցնում են իննառունական թուականների վատթարագոյն տարիները»: Ամեն օր լրագրներում տպուած փաստերը նոյնն են ասում: Դրա դիմաց քաղաքակիրթ պետութիւններից ամենահանրապետականը — Ամ. Միաց. Նահ. յայտնում են թէ ոչինչ չեն կարող անել այդ «դըքքախտ էակների համար»: Խնդրի այդ գերմարդկային դժուարութիւնը պահանջում է գործելու խորազնին, շրջահայեաց և հեռատես տակտիկա, որ լոկ բուռն զգացմունքի և խիզախութեան վրայ չպէտք է յենուած լինի... Այդ մասին մենք կը խօսենք այլ անդամ:

Հ. Ս.

28 Մարտի.

### ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԱԵՆՔԻ ՔՐՈՆԻԿ:

—Եզիպտահայեր. Պողոս փաշա Նուբարի նուիրատւութեամբ շինուելիք նոր վարժարանի (տես «Մուրճ» 1905 թ. №) հիմնարկէքը Կահիրէյում մեծ հանդիսաւորութեամբ կատարուել է մարտի 4-ին հոգեորական և աշխարհական հայ սեծամեծների և երկու սեռի բազմութեան ներկայութեամբ. Եզիպտոսի հանրային կրթութեան նախարար Եագուալ Արթին փաշան ևս ներկայ է գտնուել:

Իր ճառի մէջ Նութար փաշան ասել է ի միջի այլոց հետեւալը.

«Ի՞նկատի առնելով որ այս շինութեանց ծախքերի համար բաւական պիտի լինի միայն մէկ մասը այն գումարի, որ մեր երիտասարդներուն կրթութեան յատկացնել մտադրած էի արդէն, որոշեցի մնացածովը հաստատել թոշակներ, որոնք պիտի տրուին ամենէն յաջողակ և արժանաւոր Հայ ուսանողներին, որպէս զի միջոց ունենան կատարելափորձելու իրանց բարձրագոյն ուսումները Եգիպտոսի կամ Եւրոպայի վարժարանների մէջ, ուր կարող են աւելի ընդարձակ հմտութիւններ ստանալ, և այսպէս յաջողիլ իրանց ընտրած ասպարէզներուն մէջ պատուաւոր և անկախ գիրքեր գրաւելու:

Բնականաբար կը փափագէի որ այս թոշակներից մի քանին օգտակար լինէ մեր նախակրթարանից ենող շրջանաւարտաշակերտներին. բայց դրա համար՝ հարկ է որ այնտեղ աւանդուած ուսումը նրանց հասցնէ երկրորդական վարժարաններ ընդունելու վիճակին: Ուստի պէտք է որ չը բաւականանք սոսակ նիւթական յառաջդիմութեամբ, այլ այնպէս անենք որ նրա համապատասխան մտաւորական յառաջդիմութիւն էլ ձեռք բերուի, զուգընթաց քայլելով: Այս բարեկարգուած շէնքին մէջ պէտք է դրուի և լաւագոյն ծրագիր: Ուստի իմ արտայայտած բաղդանքս է,—որ վստահ եմ թէ Ազգն ալ կը փափագի—որ մեր վարժարանները սրանից յետոյ ոչ մէկ բանով ետ չըմնան կառավարական ուրիշ նմանօրինակ վարժարաններից: Ցանկալի է, և նոյն իսկ հարկ է, որ մերիններն էլ յաջողին համելու միևնույն աստիճանին և մեր վարժարաններից ենող տղաները այնչափ յաւ զինուած լինեն՝ որչափ ուրիշ դպրոցական հաստատութեանց մէջ պատրաստուած իրանց նմանները, որոնց հետ պէտք պիտի ունենան մրցելու կեանքի պայքարին մէջ, ինչ որ էլ լինի իրենց ընտրած ասպարէզը»:

—Ուումանեանայեր. Քրայիլայում 1866 թուականից հաստատուել են դաղթական հայեր, որոնց թիւը այժմ հասնում է 400-ի, դրանք մեծ մասամբ արհեստաւորներ են, նպարավաճառ, հացագործ, սրճագործ, կօշկակար, սափրիչ և այլն. կայ և երկաթի մի գործարանատէր և երկու ագարակատէրեր, Գաղութը ունի փոքրիկ մի եկեղեցի յարակից փոքրիկ շնորով քահանայի համար: Իսկ վարժարան, որնէ բարեգործական հաստատութիւն և ընթերցարան բացակայում են բոլորովին: Հայ արհեստաւորներ ու բանուորներ գալիս են լքցնուում Բուքարէշտ քաղաքն ևս: Հայ բանուորները անզարդացած լինելով անընդունակ են արհեստակցական միութիւններ կազմելու, հայի խնդրի համար սաստիկ մրցում են իրար հետ, աշխատանքը 18 ժամ դարձնելով, մասնակից անելով ծանր գործին նաև իրանց 5—6 տարեկան-

մանուկներին։ Ասխուսափելի է դարձել և հայ կնոջ աշխատութիւնը՝ ընտանիքը սովից ազատելու համար։ 250 տնից բաղկացած տեղացի հայութեան մէջ կատարելապէս մարած է հասայնական ոգին։ իւրաքանչիւրը իր գլխի ճարն է տեսնում։ Տեղացիները փշացած, օտարացած մի տարը են դարձել։ Այդ գաղթականների մէջ նոր-նոր երևում է գիտակցութիւն, որ պէտք է իրանք սկսեն հոգ տանել իրանց վերածնութեան մասին։ վարժարան, ընթերցարան և պրոֆեսուարնալ միութիւններ հաստատելով։ Այդ հեռաւոր երկրների հայ արհեստաւոր-բանուոր-ների մասին արգեօք մտածնւմ են մեր այն կուսակցութիւնները, որոնք «պրոլետարիատի» դասակարգային գիտակցութիւնը արթնեցնելու մասին են խօսում...»

— Լոնգոնում հայերի թիւը համառում է մօտ 300 է. բոլորն էլ համարեա աշխատաւոր դասակարգից են. մի հայ (Աթարեան) Լոնգոնի մօտ ունի վասողի գործարան, ուր աշխատաւորների մեծամասնութիւնը բաղկացած է հայերից. այդպիսով Լոնգոնի հայ գաղութի կազմը բաւական տարբերւում է Պարիզում համախմբուած հայերից, որոնք մեծ մասամբ վաճառականներ են, ուսանողներ և... խմբագիրներ, արհեստագէտներ։ Գաղթական նոր հոսանքների ծայրը Պարիզ էլ է մուտք գործել. թրքահայ գաղթականներին աւելացան այժմ կովկասահայ գաղթականներ ևս և «լէպհո-լէ-լէ»-ն հնչեց ֆրանսիական մայրաքաքարեի սըրահներից մէկում կազմած բարեգործական երեկոյթներին...»

Փարիզի Matin օրաթերթի մարտ 19-ի թուին մէջ կարդում ենք. «Վերջին կոտորածներին պատճառով իրենց երկրից վտարուած և ամենախեղճ վիճակի մէջ այս միջոցին Փարիզ հասած 12 ի չափ Հայերի մի խումբ, երկի իրենց հայրենակիցներից կազմըւած Բարեգործական ընկերութեան մասնամողովի իրենց կողմից նպաստ տալ մերժած լինելով, գնացին ժան—Գուլժոն փողոցի Հայոց եկեղեցին և այստեղ մի տեսակ ցոյց արին, որ ոստիկանութիւնը միջամտելու պարտաւորեցաւ»։

— Ամեր. Միացեալ-Նահանգ. նախագահի կողմից տրուեց պատասխան եւրոպական հայասէրների և հայերի դիմումներին. յունուարին յայտնած մեր յուսեւս շեշտը դժբախտաբար այսօր արդարացաւ. Արտաքին գործերի մինիստր Ռուտը Զէյմս Ռէյնլդսին ուղարկած նամակում յայտնում է հետեւալը.

Տ է ր.

Նախագահը ինձ յանձած է յայտնել ձեր 13 յունուարի նամակի ընդունուիլը, որի հետ ներկայացուած էր և մի խընդրագիր, հաւաքարար ստորագրուած ֆրանսիայի, իտալիայի,

Բելգիայի, Շուէդիայի, Դանիայի, Մեծ-Բրիտանիայի, Հոլլանդիայի, Գերմանիայի և Աւստրօ-Ռւգարիայի ազգեցիկ անձնաւորութիւնների կողմից, որով կոչում են անում նախագահն թիւրքահպատակ հայերի կրած անգթութիւնների առաջն առնելու:

Խնդրատուների բարձր դիրքը, եթէ հնարաւոր լինէր՝ աւելի ևս պիտի շահագրգուէր նախագահն այդ խնդրով, որին արդէն անցած տարիների ընթացքում նա իր անկեղծ ուշադրութիւնն էր նուիրած:

Այերիկացի ժողովրդի կարեկցութիւնը բոլոր երկրների ճնշուածների հանդէպ յաջորդաբար արտայայտուած է այս կառավարութեան այլև այլ միջոցներով և դժբախտ հայերի նըկատմամբ՝ ճարտարախօս կերպով ձայնակցուելով ամերիկական հասարակութեան կողմից: Միանգամայն դուրս է կասկածից, որ նախագահը կուզէ, որ հայերը վայելեն կեանքի ու գոյքի ապահովութիւն, այն, ինչ որ եւրոպական միացեալ կառավարութիւնները նպատակ են ունեցած նրանց համար ձեռք բերելու:

Թիւրքահպատակ հայերի տառապանքները բարձրաձայն օգնութիւն ու դարման են աղաղակում: Այդ տառապանքները վրդովուած են համայն մարդկութեան մարդասիրական զգացումները և աշխարհը միացած է ողբալու ու դատապարտելու այն ցեղային թշնամութիւնները, որոնք տիրում են թուրք քընակչութեան տարրեր տարրերի մէջ: Ոչ մի ճշմարտասէր մարդ չէ կարող ականատես լինել նմանօրինակ դէպքերի՝ առանց ուղենալու ոյժին դիմել նրանց առաջն առնելու համար: Ես ամենայն անկեղծութեամբ կը ցանկայի, որ Միացեալ-Նահանգները այդ ոյժը ունենային, բայց համահաւասար անկեղծութեամբ համոզուած եմ թէ Միացեալ-Նահանգների ջանքերը, որ անհրաժեշտորէն՝ օրինաւոր ու հզոր միջամտութեան ոյժ չունեն աննշան և կամ ոչ մի արդինք չպիտի բերեն, նկատի առնենելով մի ուրիշ պետութեան գործերի ու շարժառիթների զապարտութիւնը, որ անխուսափելի պիտի յայտնուի, աւելի ֆլասակար պիտի հանդիսանայ քան օգտակար այն անբախտ արարածների համար, որոնց ցանկալի կը լինէր նպաստել:

Զեր խոնարհ ծառայ՝

Ելինու Ռուս

Այլ բան սպասել նշանակում էր լինել մեր կապիտալիստական դարում բոմանտիկ, երազուն իդէալիստ...